Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 25-06-2025 թ. որոշմամբ
«ԷՐԵԲՈՒՆԻ» ԲԺՇԿԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2024 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝	
1.1 Լրիվ անվանումը	«ԷՐԵԲՈՒՆԻ» ԲԺՇԿԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը	ԵՐԵՎԱՆ ԷՐԵԲՈՒՆԻ ԷՐԵԲՈՒՆԻ ԹԱՂԱՄԱՍ ՏԻՏՈԳՐԱԴՅԱՆ ՓՈՂ. 133
1.3 Պետական գրանցման համարը	222.160.1073033
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	2019-05-08
1.5 ՀՎՀՀ-ն	00484449
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)	+(374)99017789
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը	http:/www.erebuniacademy.am
1.8 Էլեկտրոնային փոստը	info@erebuniacademy.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝	
ՀՐԱՐԱՐՏ ՍՊԸ	
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝	
Ալինա Քուշկյան	
Հրաչյա Իկիլիկյան	
Արտյոմ Իկիլիկյան	
Միքայել Մանուկյան	
Հայկուհի Կժդրյան	
Անի Ալեքսանյան	
Արմինե Բաղդասարյան	
Ադարշ Ջասվալ	
Թերեզա Խաչատրյան	
4. Կառավարչի անուն, ազգանուն՝	
Արթուր Իկիլիկյան	
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	67
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝	
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		

Digitally signed by
HOVHANNISYAN HOVHANNES
1209800187
Date: 2025.06.30 13:55:31

	Ուսման վարձավճարի փոխհատուցում	55,522,900
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Ավանդ տոկոսներ	27,147,196
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Ուսման վարձավճարներ	652,615,125
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Միջին մասնագիտական և բարձրագույն կրթության իրականացում	806,168,045	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	806,168,045	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը		

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 25 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

«ԷՐԵԲՈՒՆԻ»
բժշկական ակադեմիա հիմնադրամ

Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորական եզրակացություն

2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ

Երևան – 2025

«ԷՐԵԲՈՒՆԻ»
բժշկական ակադեմիա հիմնադրամ

Հայաստանի Հանրապետություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ	Էջ
Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	7
Զուտ ակտիվների փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

ALFA AUDIT
CLARITY IN EVERY DETAIL

«ԱԼՖԱ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան 0038, Հալաբյան 5/6
5/6 Halabyan str., Yerevan 0038, RA
Հեռ/Tel. (+374 10) 399 855, (+374 55) 560 550
www.alfaaudit.am, info@alfaaudit.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Էրեբունի» բժշկական ակադեմիա
հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Էրեբունի» բժշկական ակադեմիա հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2024թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, զուտ ակտիվների փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի

հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Հաստատված է
«Ալֆա Աուդիտ» ՍՊԸ

Տնօրեն Լ.Պողոսյան

Աուդիտոր Ա.Չատինյան

Երևան
«25» հունիսի 2025թ.

«ԱԼՖԱ ԱՈՒԴԻՏ»
"АЛЬФА АУДИТ"
"ALFA AUDIT"
00128775

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
«Էրեբունի» բժշկական ակադեմիա հիմնադրամ
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

ԱԿՏԻՎՆԵՐ	Ծանոթագրություններ	31/12/2024 դրամ 000	31/12/2023 դրամ 000
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	*2,519,759*	*2,451,613*
Ոչ նյութական ակտիվներ		*3,241*	*1,416*
Ֆինանսական ներդրումներ	5	*200,000*	*40,000*
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		*2,723,000*	*2,493,029*
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		*12*	*597*
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	*50,139*	*25,253*
Տրված փոխառություններ	7	*155,149*	*22,091*
Հարկերի և պարտադիր վճարների գծով գերավճարներ	8	*19,474*	*5,280*
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	9	*235,017*	*248,722*
Ֆինանսական ներդրումներ	5	*40,000*	*180,000*
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		*499,791*	*481,943*
Ընդամենը ակտիվներ		3,222,791	2,974,972
ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Զուտ ակտիվներ			
Կուտակված հավելաճ		*315,059*	*103,977*
Ընդամենը զուտ ակտիվներ		315,059	103,977
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	10	*2,141,239*	*2,189,447*
Հետաձգված հարկային պարտավորություններ	17	*380,180*	*392,393*
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		*2,521,419*	*2,581,840*
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11	*349,636*	*246,708*
Շահութահարկի գծով պարտավորություն		*27,047*	*23,911*
Այլ հարկերի և պարտադիր վճարների գծով պարտավորություններ	8	*9,350*	*18,403*
Եկամուտներին վերաբերող շնորհներ		*280*	*133*
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		*386,313*	*289,155*
Ընդամենը զուտ ակտիվներ և պարտավորություններ		3,222,791	2,974,972

10-ից 25-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Ռեկտոր
Արթուր Բեկիրյան

Գլխավոր հաշվապահ
Գայանե Շամիրյան

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

«Երեբունի» բժշկական ակադեմիա հիմնադրամ

2024թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Ծանոթագրություններ	2024 դրամ 000	2023 դրամ 000
Հասույթ	12	*697,131*	*556,760*
Ինքնարժեք	13	*(309,384)*	*(221,553)*
Համախառն շահույթ		**387,747**	**335,207**
Այլ եկամուտներ	14	48,808	49,697
Իրացման ծախսեր	15	(17,310)	(4,681)
Վարչական ծախսեր	16	(203,796)	(150,202)
Այլ ծախսեր		(6,742)	(6,064)
Գործառնական շահույթ		**208,707**	**223,957**
Ֆինանսական եկամուտներ	5	27,147	20,596
Ֆինանսական ծախսեր		-	(620)
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ (վնաս)		(1,896)	(761)
Շահույթ մինչև հարկումը		**233,958**	**243,172**
Շահութահարկի գծով ծախս	17	(22,876)	(17,917)
Տարվա արդյունք հարկումից հետո		**211,082**	**225,255**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Տարվա ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք		**211,082**	**225,255**

10-ից 25-ը էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Ռեկտոր
Արթուր Եկիմյան

Գլխավոր հաշվապահ
Գայանե Շաքիրյան

Զուտ ակտիվների փոփոխությունների մասին հաշվետվություն

«Էրեբունի» բժշկական ակադեմիա հիմնադրամ

2024թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

դրամ 000

	Կուտակված հավելաճ	Ընդամենը
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	(121,278)	(121,278)
Տարվա ֆինանսական արդյունք	225,255	225,255
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.	103,977	103,977
Տարվա ֆինանսական արդյունք	211,082	211,082
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.	315,059	315,059

10-ից 25-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Ռեկտոր
Արթուր Իկիլիկյան

Գլխավոր հաշվապահ
Գայանե Շամիրյան

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

«Էրեբունի» բժշկական ակադեմիա հիմնադրամ

2024թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	01.01.2024-31.12.2024	01.01.2023-31.12.2023
	դ 000	դ 000
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Ծառայությունների դիմաց ստացված դրամական միջոցներ	680,745	579,552
Վճարումներ մատակարարներին	(211,538)	(138,179)
Վճարումներ աշխատակիցներին	(195,138)	(91,564)
Վճարումներ հարկերի և այլ պարտադիր վճարների գծով, այդ թվում՝	(129,566)	(26,328)
Ռեզիդենտի շահութահարկ	(31,952)	(10,702)
Այլ մուտքեր	54,540	22,194
Այլ ելքեր	(24,418)	(72,706)
Գործառնական գործունեությունից ստացված / գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**174,625**	**272,969**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Հիմնական միջոցների ձեռք բերում	(60,546)	(153,786)
Ներդրված ավանդներ	(200,000)	(40,000)
Ներդրված ավանդների վերադարձ	180,000	-
Տրամադրված փոխառություններ	(133,010)	(24,141)
Տրամադրված փոխառությունների մարում	-	24,701
Ստացված տոկոսներ	27,147	20,596
Ներդրումային գործունեությունից ստացված / գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**(186,409)**	**(172,630)**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից		
Ստացված վարկեր և փոխառություններ	-	30,000
Վարկերի և փոխառությունների մարում	-	(30,620)
Ֆինանսական գործունեությունից ստացված / գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**-**	**(620)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/նվազում	(11,784)	99,719
Արտաժույթի փոխարժեքային տարբերություններ	(1,921)	(811)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	248,722	149,814
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի վերջի դրությամբ	235,017	248,722

10-ից 25-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Ռեկտոր
Արթուր Իկիլիկյան

Գլխավոր հաշվապահ
Գայանե Շամիրյան

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

«Էրեբունի» բժշկական ակադեմիա հիմնադրամ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա համար, հազար դրամով

1. Հիմնադրամի գործունեության բնույթը

«Էրեբունի» բժշկական ակադեմիա հիմնադրամը (այսուհետև՝ Հիմնադրամ) իրավաբանական անձ հանդիսացող ոչ առևտրային կազմակերպություն է: Հիմնադրամը հիմնադրվել է «Հրարտ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 02565217) կողմից և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից պետական գրանցում է ստացել 2019թ. մայիսի 8-ին, պետական գրանցման համարն է 222.160.107333, ՀՎՀՀ-ն՝ 00484449:

Հիմնադրամի իրավաբանական և գործունեության հասցեն է՝ ք.Երևան, Էրեբունի 0087, Տիտոգրադյան փողոց, 133 շենք

Հիմնադրամի աշխատակիցների միջին թվաքանակը 2024թ-ին կազմել է 67, իսկ 2023-ին՝ 37:

Հիմնադրամի ստեղծման և գործունեության հիմնական նպատակն է միջին մասնագիտական և նախնական կրթության, հանրակրթության, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության իրականացումը:

Հիմնադրամի շահառուներն են կրթական, առողջապահական, գիտական, հետազոտական, ուսումնաարտադրական բնագավառներին առնչություն ունեցող ֆիզիկական և իրավաբանական անձինք:

Հիմնադրամն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

- Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն
- Միջնակարգ լրիվ (ընդհանուր) կրթություն,
- Բարձրագույն և հետբուհական կրթություն,
- Բարձրագույն կրթություն (ոչ լրիվ),
- Այլ կրթություն, չներառված ուրիշ խմբավորումներում,
- Կրթության բնագավառում օժանդակ գործունեություն,
- Այլ սոցիալական սպասարկում՝ կացության ապահովմամբ,
- Օտարերկրյա դիմորդների ու սովորողների նախապատրաստական և բոլոր աստիճանների կրության կազմակերպում:

Հիմնադրամի կառավարման մարիններն են՝

- Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը (այսուհետ՝ նաև խորհուրդ)
- Հիմնադրամի գործադիր տնօրենը՝ Ռեկտորը:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը բաղկացած է հետևյալ անդամներից

N	Անուն ազգանուն	Կազմակերպություն, պաշտոն
1	Քուշկյան Ալինա	Առողջապահության ոլորտի ներկայացուցիչ, ԲԳԴ, խորհրդի նախագահ
2	Իկիլիկյան Հրաչյա	«Հրարտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ ԲԳԹ
3	Իկիլիկյան Արտյոմ	«Հրարտ» ՍՊԸ -ի ներկայացուցիչ
4	Մանուկյան Միքայել	Էրեբունի ԲԿ-ի գործադիր տնօրեն՝ ԲԳԴ
5	Կժդրյան Հայկուհի	Հիմնադրամի դասախոսական կազմից ԲԳԴ

6	Ալեքսանյան Անի	Հիմնադրամի դասախոսական կազմից, ԲԳԹ
7	Բաղդասարյան Արմինե	Հիմնադրամի դասախոսական կազմից, ՄԳԹ
8	Թերեզա Խաչատրյան	Հիմնադրամի ուսանող /4րդ կուրս/
9	Ադարշ Ջասվալ	Հիմնադրամի ուսանող /5-րդ կուրս/

Գործարար միջավայր

ՀՀ տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխություններից, ինչպես նաև հարկային և օրենսդրական այլ համակարգերի զարգացումից:

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից, և քանի որ, Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում, վերոնշյալ փոփոխություններն ազդեցություն են ունենում Հիմնադրամի վրա:

Հայաստանյան գործարար միջավայրի վրա շարունակում է իր ազդեցությունն ունենալ նաև հայ-ադրբեջանական լարված հարաբերությունները, որը հանդիսանում է ՀՀ ներդրումային և գործարար միջավայրի ամենաէական խոչընդոտը:

Անորոշ է նաև ռուս-ուկրաինական հակամարտության ազդեցությունը հայաստանյան գործարար միջավայրի վրա երկարաժամկետ առումով, այն Հայաստանի տնտեսության տարբեր ոլորտների վրա ազդել է տարբեր կերպ:

Հիմնադրամի ղեկավարությունը գտնում է, որ իրացվելիության ընթացիկ մակարդակը բավարար է կայուն գործունեության համար և պարբերաբար վերանայում է Հիմնադրամի իրացվելիության մակարդակը և, անհրաժեշտության դեպքում, պատրաստ է կիրառել իրացվելիության աջակցության համապատասխան գործիքակազմ, այնուամենայնիվ՝ ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա կարող են տարբերվել Հիմնադրամի ղեկավարության ներկա սպասումներից:

2. Պատրաստման հիմքերը

2.1. Համապատասխանությունը

Հաշվապահական հաշվառումը վարվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան: Ֆինանսական հաշվետվությունները կազմվել են համաձայն փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

2.2. Չափման հիմքը

Ակտիվներն ու պարտավորությունները ներկայացված են սկզբնական (պատմական) կամ ամորտիզացվող արժեքով:

2.3. Չափման և ներկայացման արժույթը

Հիմնադրամի համար որպես չափման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթ ընդունվել է ազգային արժույթը՝ ՀՀ դրամ (դրամ): Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

2.4. Անընդհատությունը

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները կազմվել են ելնելով անընդհատության հիմունքից, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում:

2.5. Համադրելիությունը

Ընթացիկ ֆինանսական տարվա տվյալները համեմատելի են նախորդ ժամանակաշրջանի համար ներկայացված տվյալների հետ:

Հիմնադրամը ուղղում է նախորդող ժամանակաշրջանի էական սխալները հետընթաց (բացառությամբ, երբ անիրագործելի է կոնկրետ ժամանակաշրջանի վրա սխալի հետևանքների կամ դրա կուտակային հետևանքների որոշումը) դրանց հայտնաբերումից հետո հրապարակման համար հաստատված առաջին ֆինանսական հաշվետվությունների փաթեթում՝

ա) վերահաշվարկելով ներկայացված այն նախորդող ժամանակաշրջանի (ժամանակաշրջանների) համեմատելի գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալը, կամ

բ) վերահաշվարկելով ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները ներկայացված նախորդ ամենավաղ ժամանակաշրջանի համար, եթե սխալը տեղի է ունեցել մինչև ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանը:

3. Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականության և գնահատումների համառոտ ամփոփում

3.1. Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են ստորև նշված կատեգորիաներում՝ ըստ ֆինանսական ակտիվների ձեռքբերման նպատակի: Հիմնադրամը չունի որպես «մինչև մարման ժամկետը պահվող» դասակարգված ֆինանսական ակտիվներ: Ստորև ներկայացված է Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հաշվեկշռի ամսաթվին առկա յուրաքանչյուր կատեգորիայի համար, բացառությամբ հեջավորման պահանջներին համապատասխանող ֆինանսական ակտիվների:

<u>Փոխառություններ և դեբիտորական պարտքեր</u>

Փոխառություններն ու դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք գնանշված չեն ակտիվ շուկայում:

Դրանք առաջանում են ծառայությունների մատուցման արդյունքում (օրինակ՝ առևտրային դեբիտորական պարտքեր), բայց ներառում են նաև այլ պայմանագրային դրամային ակտիվներ: Այդպիսի ֆինանսական ակտիվները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են ձեռքբերմանը կամ թողարկմանը, իսկ հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսի մեթոդը՝ հանած արժեզրկման պահուստը:

Արժեզրկման պահուստը ճանաչվում է, երբ առկա է անկողմնակալ վկայություն (օրինակ՝ կողմերն ունեն զգալի ֆինանսական դժվարություններ, չեն կատարում ստանձնած պարտավորությունները կամ ուշացնում են վճարումները) առ այն, որ դեբիտորական պարտքը սահմանված ժամկետներում հնարավոր չի լինի ամբողջությամբ հավաքագրել: Նման պահուստի գումարն ակտիվի զուտ հաշվեկշռային արժեքի և արժեզրկված պարտքերի գծով ապագա դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է: Զուտ առևտրային

դեբիտորական պարտքերի համար նման պահուստները հաշվառվում են առանձին, և վնասը ճանաչվում է Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես այլ գործառնական ծախս: Եթե հաստատվում է, որ առևտրային դեբիտորական պարտքն անհավաքագրելի է, ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը դուրս է գրվում ասոցիացված պահուստից:

Դրամական միջոցները և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցներ դրամարկղում, ցպահանջ ավանդները բանկում, երեք ամիս կամ երեք ամսից պակաս մարման ժամկետով այլ կարճաժամկետ ներդրումներ և բանկային օվերդրաֆտներ՝ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով: Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում բանկային օվերդրաֆտները ներառվում են ընթացիկ պարտավորություններում՝ վարկեր և փոխառություններ տողում:

3.2. Վարձակալություն

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն, եթե փոխանցվում են սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները: Վարձակալությունը դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն, եթե չեն փոխանցվում սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները:

3.3. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները գնահատվել են սկզբնական (ձեռք բերման, կառուցման) արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է հիմնական միջոցների ձեռքբերմանն ուղղակիորեն վերագրելի ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը, ուղղակի աշխատուժի գծով ծախսերը, ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած այլ ծախսումները, ակտիվի ապատեղակայման և քանդման ծախսերը, տեղանքի վերականգնման ծախսերը, ինչպես նաև կապիտալացված փոխառության ծախսումները:

Հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են այն առանձին ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները, որին վերաբերում են: Հիմնական միջոցների բաղկացուցչի փոխարինման ծախսերը ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ Հիմնադրամ կկրեն այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները և վերջինիս արժեքը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել: Փոխարինվող բաղկացուցչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

Հիմնադրամը 2019թ-ին իր հիմնադրից անհատույց օգտագործման իրավունքով ստացել է անշարժ գույքեր, որոնք որպես շնորհ ստացման պահին ճանաչվել և հաշվառվել են իրական արժեքով:

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը և վնասը որոշվում են համեմատելով օտարումից ստացվելիք մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում են զուտ հիմունքով «Այլ եկամուտ» կամ «Այլ ծախսեր» հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա մնացորդային արժեքը: Առանձին ակտիվների էական բաղկացուցիչները գնահատվում են, և եթե բաղկացուցչի օգտակար ծառայության ժամկետը տարբերվում է ակտիվի մնացած մասերի

օգտակար ծառայության ժամկետից, ապա այդ բաղկացուցչի մաշվածությունը հաշվարկվում է առանձին: Մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արժենվազեցման գծային մեթոդով՝ առանձին ակտիվների օգտակար ծառայության ժամկետների ընթացքում: Մաշվածությունը սկսվում է հաշվարկվել այն պահից, երբ ակտիվը մատչելի է դառնում օգտագործման համար :

Հիմնական միջոցների համար սահմանվել են հետևյալ օգտակար ծառայության ժամկետները՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարի)	Տարեկան մաշվածության դրույք (%)
Շենքեր, շինություններ	10-50	2-10
Կառուցվածքներ	8	12.5
Մեքենաներ և սարքավորումներ, տնտեսական գույք	5-8	12.5-20
Համակարգչային տեխնիկա	1	100
Տրանսպորտային միջոցներ	8	12.5
Այլ հիմնական միջոցներ	5-8	12.5-20

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

3.4. Պաշարներ

Պաշարները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով, իսկ հետագայում չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, փոխարկման և պաշարները ներկայիս գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները:

Համանման բնույթ և կիրառություն ունեցող բոլոր պաշարների ինքնարժեքի որոշման համար կիրառվում է ինքնարժեքի առաջինը մուտք՝ առաջինը ելք (ԱԻԱՕ) բանաձևը:

3.5 Եկամուտներ և ծախսեր, շնորհներ

Եկամուտները և ծախսերը հաշվառվել են հաշվեգրման հիմունքով, այսինքն՝ նրանք համարվել են եկամուտ կամ ծախս դրանց տեղի ունենալու պահին անկախ դրանց հետ կապված դրամական միջոցների վճարման կամ ստացման ժամկետից:

Ստացված շնորհները, նախքան եկամտի (հասույթի) ճանաչման չափանիշները բավարարելը, ճանաչվում են որպես պարտավորություն:

Շնորհը, որը Հիմնադրամի համար չի սահմանում որոշակի ապագա պայմանների կատարում, ճանաչվում է եկամտում, երբ շնորհի գծով մուտքերը ստացման ենթակա են, իսկ այն շնորհը, որը սահմանում է որոշակի ապագա պայմանների կատարում, ճանաչվում է եկամտում միայն, երբ պայմանների կատարումը բավարարվում է:

Ակտիվներին վերաբերող շնորհը նվազեցվում են ակտիվի հաշվեկշռային արժեքը հաշվարկելիս: Շնորհը արտացոլվում է շահույթում կամ վնասում մաշվող (ամորտիզացվող) ակտիվի օգտակար ծառայության ընթացքում՝ նվազեցված մաշվածության ծախսի ձևով:

Շնորհը, որը ստացման ենթակա է դառնում ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որի նպատակն է Հիմնադրամին տրամադրել անհետաձգելի ֆինանսական օգնություն՝ առանց դրա հետ կապված հետագա ծախսումների, ճանաչվում են շահույթում կամ վնասում այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ այն դառնում է ստացման ենթակա:

3.6. Արտարժույթով գործարքներ և մնացորդներ

Շնորհը, որը ստացման ենթակա է դառնում ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որի նպատակն է Հիմնադրամին տրամադրել անհետաձգելի ֆինանսական օգնություն՝ առանց դրա հետ կապված հետագա ծախսումների, ճանաչվում են շահույթում կամ վնասում այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ այն դառնում է ստացման ենթակա:

3.6. Արտարժույթով գործարքներ և մնացորդներ

Արտարժույթով գործարքները սկզբնական ճանաչման պահին գրանցվել են հաշվետվական արժույթով (դրամ) գործարքի օրվա դրությամբ փոխանակման փոխարժեքով, այսինքն՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով:

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին՝

- արտարժույթով արտահայտված դրամային հոդվածները ներկայացվել (վերահաշվարկվել) են փակման փոխարժեքով,
- արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները ներկայացվել են գործարքի օրվա փոխանակման փոխարժեքով:

Արտարժույթի փոխարկման հետևանքով առաջացած տարբերությունները ճանաչվել են եկամուտ կամ ծախս համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Առաջացած շահույթը և վնասը ներկայացվում են զուտ հիմունքով՝ համապարփակ ֆինանասական արդյունքների մասին հաշվետվության մեջ «Այլ ֆինանսական հոդվածներ» տողում:

Ստորև ներկայացվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ փոխանակման (փակման) փոխարժեքները.

Արտարժույթ	31.12.2024	31.12.2023
1 ԱՄՆ դոլար	396.56 ՀՀ դրամ	404.79 ՀՀ դրամ
1 եվրո	413.89 ՀՀ դրամ	447.90 ՀՀ դրամ
1 ռուբլի	3.71 ՀՀ դրամ	4.50 ՀՀ դրամ

3.7. Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Հիմնադրամին մատուցել է ծառայություն, Հիմնադրամը աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չգեղչված գումարը, որոնք ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչում է

ա) որպես պարտավորություն արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չգեղչված գումարը, Հիմնադրամը ճանաչում է այդ տարբերությունը որպես ակտիվ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի, և

բ) որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ այլ ՖՀՄՍ-ով պահանջվում կամ թույլատրվում է հատուցումների գումարը ներառել մեկ այլ ակտիվի արժեքի մեջ (օրինակ, պաշարների, հիմնական միջոցների դեպքում):

Հիմնադրամը փոխհատուցելի բացակայությունների ձևով աշխատակիցների հատուցումների ակնկալվող ծախսումները ճանաչում է

ա) կուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ տարեկան արձակուրդը) այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքները ապագա փոխհատուցելի բացակայությունների նկատմամբ, և

բ) չկուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ՝ ժամանակավոր անաշխատունակությունը) այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Հիմնադրամը կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները չափում է որպես լրացուցիչ գումար, որը Հիմնադրամը ակնկալում է վճարել

որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք:

3.8. Շահութահարկ

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ձեռնարկատիրական գործունեության միավորներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ եկամտում ճանաչված տարրերին:

Ընթացիկ հարկը տարվա շահութահարկի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ և ներառում է նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները: Հետաձգված հարկերը հաշվարկվում են օգտագործելով հաշվեկշռային պարտավորության մեթոդը՝ հիմնվելով ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների վրա: Հետաձգված հարկի գումարը չափվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվները և հետաձգված հարկային պարտավորությունները հաշվանցվում են, եթե հիմնադրամն ունի ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, սակայն հիմնադրամը մտադիր է հարկային պարտավորությունները մարել և հարկային ակտիվներն իրացնել զուտ հիմունքով կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվներն ու մարել հարկային պարտավորությունները:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է չօգտագործված հարկային վնասների, հարկային արտոնությունների և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով, այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ հարկային օգուտը կիրացվի:

4. Հիմնական միջոցներ

	Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ	Մաշվող հիմնական միջոցներ						
		Շենքեր և շինություններ	Կառուցվածքներ	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրական, տնտեսական գույք	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք Առ 01.01.2024թ.	-	2,589,385	-	15,070	47,000	8,059	35,062	2,694,575
Գնում/կապիտալացում	12,000	79,996	12,096	9,845	1,810	31,428	7,428	154,602
Դուրս գրում	-	-	-	-	(1,560)		-	(1,560)
Առ 31.12.2024թ.	12,000	2,669,381	12,096	24,914	47,250	39,487	42,489	2,847,617
Մաշվածություն Առ 01.01.2024թ.	-	(229,807)	-	(4,172)	(490)	(1,849)	(6,644)	(242,962)
Հաշվարկ	-	(62,546)	(60)	(8,003)	(5,977)	(1,958)	(6,428)	(84,972)
Օտարում	-		-	-	76	-	-	76
Առ 31.12.2024թ.	-	(292,354)	(60)	(12,175)	(6,390)	(3,807)	(13,073)	(327,858)
Հաշվեկշռային արժեք								
Առ 31.12.2023թ.	-	2,359,578	-	10,898	46,510	6,210	28,417	2,451,613
Առ 31.12.2024թ.	12,000	2,377,027	12,036	12,740	40,860	35,679	29,416	2,519,759

31.12.2024թ.-ի դրությամբ 10,097 հազ. դրամ սկզբնական արժեքով 100 անուն հիմնական միջոցներ հաշվառված են զրոյական հաշվեկշռային արժեքով:

Հիմնադրամի հիմնական միջոցների կազմում ներկայացված են 2,410,400 հազար դրամ սկզբնական արժեքով (հաշվեկշռային արժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ 2,141,239 հազար դրամ), շինություններ, որոնք 2019թ-ին Հիմնադրամի հիմնադիր կազմակերպության կողմից անորոշ ժամկետով անհատույց օգտագործման են տրվել Հիմնադրամին: Անհատույց օգտագործման իրավունքով ստացված շենքերը և շինությունները որպես շնորհ սկզբնապես ճանաչվել են իրական արժեքով (ծանոթագրություն 20):

Հիմնադրամի մաշվածության ծախսը ըստ ծախսային հոդվածների բաշխվել է հետևյալ կերպ.

	2024	2023
Մատուցված ծառայությունների ինքնարժեք	67,200	59,734
Վարչական ծախսեր	17,606	6,523
Այլ ծախսեր	167	335
Ընդամենը	**84,973**	**66,592**

5. Ֆինանսական ներդրումներ

	31.12.2024	31.12.2023
12 ամսից ավել մարման ժամկետ ունեցող բանկային ավանդ	200,000	40,000
Մինչև 12 ամիս մարման ժամկետ ունեցող բանկային ավանդ	40,000	180,000
Ընդամենը	**240,000**	**220,000**

Համաձայն ավանդի պայմանագրերի, Հիմնադրամը կարող է ավանդը ժամանակից շուտ հետ ստանալ բանկի համաձայնության դեպքում: Երկարաժամկետ ավանդի վերադարձման ժամկետը 2026 թվականի նոյեմբերի 5-ն է:

Ֆինանսական ներդրումների գծով տոկոսային եկամուտները հետևյալն են.

	2024	2023
Հաշվեգրված տոկոսներ	27,147	20,596

6. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	31.12.2024	31.12.2023
Դեբիտորական պարտքեր ուսման վարձերի գծով	52,782	27,245
Տրված ընթացիկ կանխավճարներ	3,642	2,389
Այլ դեբիտորական պարտքեր	2,160	-
Դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստի պահուստ	(8,445)	(4,381)
Ընդամենը	**50,139**	**25,253**

7. Տրված փոխառություններ

	31.12.2024	31.12.2023
Մինչև 12 ամիս մարման ժամկետ ունեցող տրամադրված փոխառություն	155,149	22,091
Ընդամենը	**60,820**	**13,843**

Փոխառությունները տրվել են կապակցված կողմերին անտոկոս և գրավով չապահովված պայմանագրերի հիման վրա:

8. Հարկեր և պարտադիր վճարներ, բացառությամբ շահութահարկի

	31.12.2024		31.12.2023	
	Գերավճար	Պարտավորություն	Գերավճար	Պարտավորություն
Հարկերի միասնական հաշիվ	19,390	-	5,280	-
ԱԱՀ	84	-	-	-
Եկամտային հարկ	-	8,066	-	15,011
Սոցիալական վճար	-	921	-	2,281
Դրոշմանիշային վճար	-	363	-	1,111
Ընդամենը	**19,474**	**9,350**	**5,280**	**18,403**

9. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	31.12.2024	31.12.2023
Բանկային հաշիվներ ՀՀ դրամով	67,247	123,407
Բանկային հաշիվներ արտարժույթով	167,770	125,316
Ընդամենը	**235,017**	**248,722**

10. Ակտիվներին վերաբերող շնորհներ

	2024	2023
Մնացորդը տարեսկզբին	**2,189,447**	**2,237,655**
Ստացված շնորհներ	-	-
Եկամուտ ճանաչված շնորհներ	(48,208)	(48,208)
Մնացորդը տարեվերջին	**2,141,239**	**2,189,447**

Ակտիվներին վերաբերող շնորհի մանրամասները ներկայացված են ծանոթագրություն 4-ում: Շնորհի գծով եկամուտը ճանաչվել է հիմնական միջոցի մաշվածության ծախսին համապատասխան:

11. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	31.12.2024	31.12.2023
Ստացված կանխավճարներ	286,075	222,932
Առևտրային կրեդիտորական պարտքեր գնումների գծով	42,881	18,670
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցների կուտակված արձակուրդային վճարների գծով	20,680	5,105
Ընդամենը	**349,636**	**246,708**

12. Հասույթ

	2024	2023
Ուսումնական ծառայությունների մատուցումից հասույթ	697,131	556,760
Ընդամենը	**697,131**	**556,760**

13. Ինքնարժեք

	2024	2023
Մատուցված ծառայությունների ինքնարժեք, այդ թվում՝	309,384	221,553
– Աշխատավարձի գծով ծախսեր	147,310	73,497
– Հիմնական միջոցների մաշվածություն, նորոգում և սպասարկում	87,645	61,440
– Ստացված ծառայություններ	74,034	84,782
– Այլ ծախսեր	395	1,834
Ընդամենը	**309,384**	**221,553**

14. Այլ եկամուտներ

	2024	2023
Եկամուտ ճանաչված շնորհներ	48,208	48,208
Այլ եկամուտներ	600	1,489
Ընդամենը	**48,808**	**49,697**

15. Իրացման ծախսեր

	2024	2023
Մարկետինգի և գովազդի ծախսեր	10,401	4,021
Այլ ծախսեր	6,909	660
Ընդամենը	**17,310**	**4,681**

16. Վարչական ծախսեր

	2024	2023
Աշխատանքի գծով ծախսեր	124,119	63,302
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածության (ամորտիզացիայի) և վերանորոգման ծախսեր	22,303	7,476
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	33,991	57,831
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	14,690	4,560
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	665	585
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	552	4,138
Այլ վարչական ծախսեր	7,475	12,309
Ընդամենը	**203,796**	**150,202**

17. Շահութահարկ և հետաձգված հարկեր

17.1. Շահութահարկի գծով ծախս

	2024	2023
Ընթացիկ հարկի գծով ծախս	(35,088)	(27,265)
Հետաձգված հարկի գծով եկամուտ	12,213	9,348
Շահութահարկի գծով ընդհանուր ծախս համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	**(22,876)**	**(17,917)**

2024 և 2023 թվականների շահութահարկը հաշվարկելիս 22 օրենսդրությանը համապատասխան կիրառվել է 18% դրույքաչափը:

17.2. Շահութահարկի արդյունավետ հարկային դրույքաչափի համադրում

	2024		2023	
	Գումար	%	Գումար	%
Շահույթ/վնաս մինչև շահութահարկով հարկումը	233,957	100%	243,172	100%
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	(42,112)	18%	(43,771)	18%
Չեվազեցվող/(չհարկվող) հոդվածներ	39,022	-17%	91,699	-38%
Հարկվող շահույթ	**194,935**		**151,473**	
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	**(35,088)**	**15.0%**	**(27,265)**	**11.2%**

17.3. Հետաձգված հարկեր

	31.12.2024		
	Ակտիվի հաշվեկշռային արժեք	Հարկային բազա	Հարկվող ժամանակվոր տարբերություն
Հիմնական միջոցներ	2,141,239	0	2,141,239
Ընդամենը			**2,141,239**
Հարկի դրույքը			**18%**
Հետաձգված հարկային պարտավորություն			**385,423**

	31.12.2024		
	Ակտիվի հաշվեկշռային արժեք	Հարկային բազա	Նվազեցվող ժամանակվոր տարբերություն
Դեբիտորական պարտքերի կորուստի պահուստի գծով (տես ծանոթագրություն 6)	44,337	52,782	8,445
Ընդամենը			**8,445**
Հարկի դրույքը			**18%**
Հետաձգված հարկային ակտիվ			**1,520**

	31.12.2024		
	Պարտավորության հաշվեկշռային արժեք	Հարկային բազա	Նվազեցվող ժամանակվոր տարբերություն
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցների կուտակված արձակուրդային վճարների գծով (տես ծանոթագրություն 11)	20,680	0	20,680
Ընդամենը			**20,680**
Հարկի դրույքը			**18%**
Հետաձգված հարկային ակտիվ			**3,722**

Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ	31.12.2023	Շահույթում կամ վնասում ճանաչված	31.12.2024
Հիմնական միջոցների գծով	(394,100)	8,677	(385,423)
Դեբիտորական պարտքերի կորուստի պահուստի գծով	789	732	1,520
Աշխակիցների կուտակված արձակուրդային վճարների գծով	919	2,803	3,722
Ընդամենը	**(392,393)**	**2,440**	**(380,180)**

Հիմնադրամը հաշվանցել է հետաձգված հարկային ակտիվները և հետաձգված հարկային պարտավորությունները՝ հիմք ընդունելով թիվ 12 «Շահութահարկեր» հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտի դրույթները

18. Կապակցված կողմերի հետ գործարքներ

Հիմնադրամի կապակցված կողմերը ներառում են Հիմնադրամի հիմնադիր "Հրարտ" ՍՊԸ-ն (02565217), հիմնական ղեկավար անձնակազմը, ղեկավարության և հոգաբարձուների խորհրդի անդամների հետ փոխկապակցված կազմակերպությունները

- ***Առանցքային կառավարչական անձնակազմի վարձատրություն***

Հիմնադրամի առանցքային ղեկավար անձնակազմում ներառված է Հիմնադրամի ռեկտորը և պրոռեկտորները, որոնց հատուցումները ներառյալ հարկերը կազմել են՝

	2024	2023
Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ	84,026	23,025

- ***Այլ գործարքներ կառավարչական անձնակազմի հետ***

Գործարքներ/մնացորդներ	31.12.2023	Ավելացում	Նվազեցում	31.12.2024
Տրված փոխառություններ	22,091	133,906	(848)	155,149

- ***Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ***

Գործարքներ/մնացորդներ	31.12.2023	Ավելացում	Նվազեցում	31.12.2024
Դեբիտորական պարտքեր վարձակալության գծով	-	720	-	720
Տրված կանխավճար	500	-	-	500

19. Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական ռիսկերի կառավարումն Հիմնադրամի համար ունի կարևոր նշանակություն: Դրանք հիմնականում կապված են պարտքային, իրացվելիության և արտարժույթի ռիսկերի հետ:

19.1. Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ պայմանագրային մյուս կողմն ի վիճակի չի լինում կատարելու իր պարտավորությունները, որի հետևանքով Կազմակերպությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Հիմնադրամի հիմնական պարտքային ռիսկն առաջանում է ուսման վարձերի հավաքագրելիության գծով:

Ակնկալվող պարտքային կորուստները չափելիս առևտրային դեբիտորական պարտքերը գնահատվել են հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ: Առևտրային դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների հնարավոր մեծությունը հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատվել է 8,445 հազար դրամ:

19.2. Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Հիմնադրամը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի:

Արտարժույթի ռիսկն առաջանում է, երբ արտարժույթով արտահայտված ակտիվները ավելի կամ պակաս են նույն արժույթով արտահայտված պարտավորություններից: Հիմնադրամի արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունը մեծամասամբ առաջանում է արտարժութային դրամական միջոցներից և տրված փոխառություններից.

Ստորև ներկայացված է արտարժույթի ռիսկին Հիմնադրամի ենթարկվածությունը.

	31.12.2024	31.12.2023
	USD	USD
Ֆինանսական ակտիվներ		
-Տրված փոխառություններ	18,035	3,027
-Դրամական միջոցներ	423,070	309,582
Ընդամենը արտարժութային ակտիվներ	**441,106**	**312,609**
Ֆինանսական պարտավորություններ		
Ընդամենը արտարժութային պարտավորություններ	-	-
Զուտ արդյունք	441,106	312,609

19.3 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը պարտավորությունները մարելու նպատակով համապատասխան դրամական միջոցների սակավության կամ բացակայության ռիսկն է: Իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները, որոնք թույլ կտան մարելու դրամական հոսքերի հետ կապված պարտավորությունները:

Հիմնադրամը իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և տրված փոխառությունները: Հիմնադրամը իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը:

Ստորև ներկայացված է Հիմնադրամի ակտիվների ընթացիկ իրացվելիության վերլուծությունը

	31.12.2024	31.12.2023

Ընթացիկ ակտիվներ	499,791	481,943
Ընթացիկ պարտավորություններ	386,313	289,155
Ընթացիկ իրացվելիության գործակից	**1.29**	**1.67**
Դրամական միջոցներ և համարժեքներ	235,017	248,722
Ընթացիկ պարտավորություններ	386,313	289,155
Բացարձակ իրացվելիության գործակից	**0.61**	**0.86**

20. Դարմանական պարտավորություններ

Ֆինանսական երաշխիքներ և ակրեդիտիվներ

Հիմնադրամը 31.12.2024 և 31.12.2023 ամսաթվերի դրությամբ ֆինանսական երաշխիքներ և ակրեդիտիվներ չի ունեցել:

Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Հիմնադրամի գույքը ապահովագրված չէ: Այն ապահովագրված չէ գործունեության ընդհատման և երրորդ կողմերի եկամտամբ պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց առաջացած Հիմնադրամի տարածքում տեղի ունեցած պատահարներից կամ նրա գործունեությունից հասցված վնասից: Քանի դեռ Հիմնադրամը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ էական ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Իրավական պարտավորություններ

Հիմնադրամի ղեկավարությունը տեղյակ չէ Հիմնադրամի դեմ հարուցված որևէ փաստացի, անավարտ կամ սպառնացող էական հայցերի մասին:

Դարմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի Հանրապետությունում հարկային համակարգը համեմատաբար նոր է և հատկանշական է հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ: Վերջինս հաճախ հստակ չէ, հակասական է և պահանջում է մեկնաբանություններ: Շատ դեպքերում այս կամ այն հարցում տարբեր հարկային և այլ իրավասու մարմիններ ունեն տարբեր մեկնաբանություններ: Հարկային խնդիրներն ուսումնասիրվում են հարկային մարմինների կողմից, որոնք օրենսդրությամբ լիազորված են հաշվարկել տուգանքներ և տույժեր:

Այս փաստերը Հայաստանի Հանրապետությունում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ Հիմնադրամը չունի լրացուցիչ հարկային պարտավորություններ և պահուստ չի ձևավորել լրացուցիչ հարկային պարտավորությունների գծով:

21. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Հաշվետու ամսաթվից հետո մինչև վավերացման ամսաթիվը ընկած ժամանակահատվածում ճշգրտող դեպքեր կամ էական չճշգրտող դեպքեր տեղի չեն ունեցել:

21. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Հաշվետու ամսաթվից հետո մինչև վավերացման ամսաթիվը ընկած ժամանակահատվածում ճշգրտող դեպքեր կամ էական չճշգրտող դեպքեր տեղի չեն ունեցել:

22. Ֆինանսական հաշվետվությունների հաստատում

Սույն ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են 2025թ հունիսի 23-ին:

Ռեկտոր	Գլխավոր հաշվապահ
Արթուր Եկիլիկյան	Գայանե Շամիրյան

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 30.06.2025 12:54